Մրցույթ՝ ՀՀ «Երևանի Մ. Գալշոյանի անվան հ.148 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի

« Հայոց լեզու և գրականություն» (շաբաթական 26 դասաժամ), «Պատմություն » (շաբաթական 6 դասաժամ), «Հասարակագիտություն » (շաբաթական 7 դասաժամ), «ՆԶՊ» (շաբաթական 8 դասաժամ), «Արվեստ » (շաբաթական 4 դասաժամ) առարկաների ուսուցիչների թափուր տեղերի

համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկաց-վում է՝ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատու-թյունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-դիմում (Ձև 1),

-1լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

-անձը հաստատող փաստաթուղթ,

-«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

-ինքնակենսագրություն (Ձև 5),

-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ –ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

-որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ , մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2025 թ.-ի սեպտեմբերի 08 -ից մինչև սեպտեմբերի 19 -ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից մինչև 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 24.09.2025թ. -ին՝ ժամը 14:00-ին , ՀՀ ԿԳՄՄՆ Երևանի Մ. Գալշոյանի անվան հ.148 ավագ դպրոցում. հասցեն՝ք. Երևան, Հովսեփ Էմին փող. 8շենք (Երևանի Ս. Կապուտիկյանի անվան հ.145 հիմնական դպրոցի շենքում) :

Տեղեկությունների համար զանգահարել՝(033)22-73-66 հեռախոսահամարով: